Կամո Առաքելյան, պ.գ.թ

«Զովաբերի պատմություն» գրքի համահեղինակ

ԲՌՆԱՃՆՇՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՌՆԱԴԱՏՎԱԾՆԵՐ

Խոսքը վերաբերվում է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո ստեղծված իրավիճակին, երբ հաստատվեցին նոր կարգեր, նոր գաղափարախոսություն և պետության կառուցման նոր մոտեցումներ: Բոլշևիկյան գաղափարախոսությամբ սոցիալիզմի կառուցումը սրեց դասակարգային պայքարը, այն ավելի թեժացավ կոլեկտիվացման, սոցիալիստական ինդուստրացման տարիներին՝ 1930–ական թթ. էր և Հայրենական մեծ պատերազմի տարիներին ու պատերազմից հետո 1948–1949 թթ.: Մարդկանց բառապաշարում հաճախ լսվող խոսքեր էին «հակա», «կուլակ», «դաշնակ», «ժողովրդի թշնամի», «նացիոնալիստ» պիտակները:

Խորհրդային իշխանությունը հենց սկզբից որոշում կայացրեց, որ նոր հասարակարգում անհամատեղելի են ազնվականությունը, խոշոր ձեռնարկատերերը, առևտրականները, սպայակազմը, նախկին ոստիկանությունը, անհատ գյուղացիներն ու հոգևորականները:

Սևանի տարածքից 1930-1949 թթ. բռնադատվածների թիվը հասնում էր 211 մարդու, որոնցից ութը գնդակահարվեցին: Յայջի գյուղից այդ թվականներին մեկը գնդակահարվել է, բռնադատվել՝ հինգը, Ալթայի երկրամաս են աքսորվել ութը:

Ահա ներկայացնում ենք մեկ ընտանիքի դառը ճակատագրի պատմությունը:

ԹՈՐՈՍՅԱՆ ԲԵՆՅԱՄԻՆ (ԲԵՆԻԿ) ՍՏԵՓԱՆԻ

Վավերագրական պատմություն

Ծնված 1912 թ. չքավոր գյուղացու ընտանիքում, Ախտայի շրջանի Յայջի գյուղում: Մանկավարժ, կրթությունը՝ միջնակարգ, ԴԵՄ–ի (Դաշնակցության երիտասարդական միություն) անդամ, ամուսնացած:

Մեջ ենք բերում մի քանի պարբերություն Բենիկի ինքնակենսագրությունից

Ծնվել եմ 1912թ. Ախտայի շրջանի Յայջի գյուղում, միջակ գյուղացու ընտանիքում: Միջնակարգ կրթությունս ստացել եմ Երևան քաղաքում: Կոմերիտմիության շարքերում եղել եմ 1926թ. մինչև 1931թ.: Կոմերիտմիությունից հեռացել եմ 1931թ. մարտ ամսից՝ երեք պատճառով՝ 1. կոլտնտեսության շարքերը չընդունվելու պատճառով, 2. հակասովետական հայացքների համար, 3. ոչ կայունության համար: Դպրոցն ավարտելուց հետո՝ 1930թ. ընդունվել եմ պետական համալսարանի նախապատրաստական դասընթացը, սովորել ընդամենը մեկ ամիս և հինգ օր, այնուհետև հեռացվել որպես հակասովետական տարր:

Լինելով հակասովետական հայացքների տեր, ես հափշտակվեցի հայ ազգային գրականությամբ՝ Ռաֆֆի և Ավետիս Ահարոնյան: Այդ գրականության ազդեցության տակ էլ ես ձևավորվեցի որպես դաշնակցական: Դաշնակցական կուսակցության գաղափարախոսությունն ընդունել եմ շատ ավելի հոգեհարազատ և ատելությամբ լցվել կոմունիստական կուսակցության հանդեպ, քանզի այդ կուսակցությունը ոչ միայն վանում էր ինձ, այլև ամենուրեք հետապնդում: Եվ քանի որ ես ինձ համարում էի դաշնակցական, սկսեցի իմ ընկերների մեջ փնտրել համախոհներ, բայց ռիսկի դիմել չցանկացա, այդ պատճառով էլ առհասարակ չէի խոսում այդ մասին:

1930 թ. մայիսի 19–ին Յայջի գյուղից Երևան եկավ իմ համագյուղացի՝ Երվանդ Սարգսյանը, որը և կոմերիտմիության անդամ էր: Եկավ ինձ մոտ, մենք երկար զրույց ունեցանք գյուղի կոլտնտեսաշինության մասին: Երվանդ Սարգսյանը ինձ պատմեց գյուղում տիրող անօրինականությունների և անիշխանության մասին, ինչպես նաև կոմկուսի քաղաքականության շնորհիվ հետզհետե աղքատության եզրին հասած գյուղացիների դժգոհությունների ու կյանքի մասին: Այդ ամենը ինձ վրա շատ վատ տպավորություն թողեց: Ես նրան հարցրի, թե իրենք, որպես կոմերիտականներ, ինչ միջոցներ են ձեռնարկում: Նա պատասխանեց.«Չնայած մենք կոմերիտականներ ենք, բայց պայքարի ուղին ընտրել ենք բոլորովին այլ կերպ: Մենք ունենք ընդհատակյա կազմակերպություն, որը և պայքար կմղի գյուղի սովետական իշխանության դեմ: Իմ հարցին, թե ինչ մեթոդներով, նա պատասխանեց.«Ամեն ինչ կարող ես գալ և իմանալ գյուղում, մանավանդ, եթե ղեկավարությունը վերցնենք մեր ձեռքը»: Ես նրան անմիջապես իմ համաձայնությունը չտվեցի, բայց արդեն հաջորդ օրը դրական պատասխան տվի:

1930թ. մայիսի 22-ին ես մեկնեցի Յայջի: Գյուղում հանդիպեցի Երվանդ Սարգսյանին (նա ինձնից մեկ օր առաջ էր եկել գյուղ) և առաջարկեցի խորհրդակցության հրավիրել ընդհատակյա կազմակերպության անդամներին, որոնց մասին ինքն էր ինձ ասել: Նա համաձայնեց և հաջորդ օրը գյուղում կայացավ առաջին ընդհատակյա հավաքը՝ իմ մասնակցությամբ: Հավաքին մասնակցում էին Գրիգոր Բաղդասարյանը, Մկրտչյանը, Աշոտ Հայրապետյանը, Երվանդ Սարգսյանը: Այդ հավաքում էլ իմ առաջարկությամբ խումբը կոչվեց Դաշնակցության Երիտասարդական Միություն: Տեղում ղեկավար ընտրվեց Գրիգոր Բաղդասարյանը, քարտուղար՝ Երվանդ Սարգսյանը, իսկ ընդհանուր ղեկավար ընտրվեցի ես: Մենք դեռ չունեինք ոչ ծրագիր և ոչ էլ կանոնադրություն: Որոշում կայացավ զբաղվել ինքնազարգացմամբ՝ մեր բոլորի քաղաքական մակարդակը բարձրացնելու համար, պահպանելով անշուշտ և գաղտնիությունը: Հաջորդ օրը ես վերադարձա Երևան:

Երկրորդ անգամ Երևանից Յայջի եմ մեկնել 1930թ. հունիսի 16-ին,որտեղ և հրավիրել եմ ԴԵՄ ընդհատակյա ժողով: Այդ ժողովին ինձ հետ միասին մասնակցում էին նաև 6 հոգի:

1. Գրիգոր Բաղդասարյանը,
2. Երվանդ Սարգսյանը,
3. Կամիս Մկրտչյանը,

4. Աշոտ Հայրապետյանը,
5. Պատվական Պետրոսյանը՝ անկուսակցական (19 տարեկան),
6. Գևորգ Լևոնյանը՝ անկուսակցական (19 տարեկան):

Ժողովը տեղի ունեցավ դաշտում, օրակարգում դրված էին հետևյալ հարցերը. 1. Մեր նպատակներն ու խնդիրները: Վերջնական նպատակը համարվում էր ազգային ազատագրական պայքարը: 2. Զենքի ձեռքբերման հարց: Երկրորդ հարցի շուրջ հանձնարարվեց կազմակերպության անդամներին՝ ինքնուրույնությամբ ձեռք բերել զենք: Այդ հարցի շուրջ տարաձայնություններ եղան, և հարցն ինքն իրեն վերացավ: Իմ բացակայության ընթացքում խումբը կոլտնտեսությունում զբաղվում էր համարյա միայն վնասարարությամբ: Իմանալով այդ մասին, ես այն կտրականապես արգելեցի: 1930թ. հունիսի 17-ին վերադարձա Երևան:

1930թ. սեպտեմբերին ինձ նշանակեցին ուսուցիչ ախտայի շրջանի Քարվանսարա գյուղում: Քանի որ այդ գյուղը գտնվում էր Ցայջի գյուղից ընդհամենը երեք կմ հեռավորության վրա, այդ ինձ հնարավորություն տվեց ղեկավարել Ցայջիի ԴԵՄ-ը: Մինչև 1930թ. դեկտեմբերը հրավիրվել է ընդամենը մեկ խորհրդակցություն, ուր և որոշում կայացվեց գյուղսովետի ընտրություններին մասնակից դարձնել մեր մարդկանց՝ գյուղական իշխանությունը մեր ձեռքը վերցնելու համար: Բայց դա մեզ չհաջողվեց, քանի որ մեր թեկանծուներին ժամանակին չներկայացրեցինք: Հունվար ամսին Ցայջի գյուղի ԴԵՄ-ը դադարեց գործել: 1930թ. մարտ ամսվա վերջին Երվանդ Սարգսյանը ինձ տեղեկացրեց, որ այդ ամենի մասին ինքը հայտնել է Պետական քաղաքական վարչության շրջանային բաժին և այլևս հրաժարվում է որևէ աշխատանք տանել սովետական իշխանության դեմ, քանզի ինքն ընդունվել է կոմերիտմիության շարքերը և չի կարող հանդուրժել այս ամենը: Դրա համար ես նրան շատ խիստ հանդիմանեցի: Ինձ հայտնի չէր, թե արդյոք մնացած անդամները արել էին նույնպիսի հայտարարություններ, ես այդ թեմայով այլևս ոչ ոքի հետ չխոսեցի, քանզի սկսեցի կասկածել անխտիր բոլորին: 1931թ. մայիսի 1-ին ինձ կանչեցին ՊՔՎ շրջանային բաժին՝ Համբո Ծատուրովի մոտ: Նա մի շարք հարցեր տվեց, որոնց ես պատասխանում էի խուսափողաբար և ամբողջ մեղքը գցում մի քանի կոմունիստների վրա, որոնք մեղավոր էին համարվում կոլտնտեսության կայացման գործընթացում: Ինձ բաց թողեցին: 1931թ. մայիսի 13-ին ես գրեցի բացատրագիր և ներկայացրի ՊՔՎ շրջանային բաժին, որի մեջ մանրակրկիտ ներկայցրել էի իմ հակասովետական գործունեությունը և կազմակերպության բոլոր մասնակիցների անունները: 1931թ. մայիսի 15-ին ես հարցաքննվեցի և տվեցի համոզիչ պատասխաններ: Մարտ ամսին ես արդեն հեռացվել էի աշխատանքից, և իմ դեմ սկսվել էին հալածանքները: Ուր որ դիմում էի, փակվում էին բոլոր դռները: Ում դիմում էի՝ խնդրանքս մնում էր անպատասխան: Սեպտեմբեր ամսին ես վերադարձա Երևան: 1930թ. հունիսին ես հանդիպեցի իմ դպրոցական ընկերոջը՝ Գրիշա Կարապետյանին: Երկար խոսեցինք քաղաքական թեմաներով և ես նրան առաջարկեցի դառնալ ԴԵՄ անդամ: Որպես կազմակերպության հավատարմության երաշխիք, նա մի նամակ գրեց Ցայջի գյուղի ԴԵՄ-ին և Երվանդ Սարգսյանի միջոցով ուղարկեց գյուղ: Որքանով ես գիտեմ, այդ նամակում նա

խորհուրդ էր տալիս լինել զգույշ և նաև այլ խորհուրդներ էր տալիս: Դրանից հետո Կարապետյանին հանդիպել եմ 1931թ. օգոստոսին՝ Երևանի կայարանում, որտեղ կազմակերպչական հարցերի շուրջ ոչ մի խոսք չի եղել: Վերջին հանդիպումը եղել է 1932թ. հունիսի 26-ին: Իմ հարցին, թե ինչպես են ընթանում գործերը, նա պատասխանեց. «Ես այդ հարցերով այլևս չեմ հետաքրքրվում և բացի այդ ես արդեն կոմերիտական եմ»:

Ղուկաս Ղուկասյանին ես ճանաչում եմ 1931թ. նոյեմբեր ամսից: Նրա հետ ծանոթացել եմ Վասպուրական Կարապետյանի տանը, երբ վերջինս բացակայում էր: Նրա հետ խոսել եմ խորհրդային իշխանության դեմ պայքարի, հայ ազգի անկախության և այլ հարցերի մասին: Ղուկասը սկզբում առարկեց, բայց հետո համաձայնեց: 1931թ. դեկտեմբերի 22-ին ես այդ առաջարկությունը արեցի նաև Վասպուրական Կարապետյանին, նա տվեց իր համաձայնությունը, չնայած սկզբում տատանվում էր: Այսպիսով, 1932թ. նոյեմբերի 22-ին Երևանում ևս իմ ղեկավարությամբ ստեղծվեց ԴԵՄ կազմակերպությունը: Խումբը կազմված էր երեք հոգուց: Անցավ որոշ ժամանակ: 1932թ. դեկտեմբերի 24-ին ես նշանակվեցի ուսուցիչ Աղբաբինսկի (Ղուկասյանի) շրջանի Կզլ Կոչ (Կարմիր խոյ) գյուղում: 1932թ. մայիսի 1-ին մորս հիվանդության պատրվակով Եղիշե Գրիգորյանը ինձ կանչեց Երևան: Մայիսի 4-ին Երևանում ես հանդիպեցի նրան, նա աշխատում էր պահածոների գործարանում: Երկար խոսելուց հետո նա էլ համաձայնեց միանալ մեր կազմակերպությանը: 1932թ. մայիսի 5-ի վաղ առավոտյան Գետարչայ գետի ափին գումարվեց ժողով, որին մասնակցում էին Ղուկաս Ղուկասյանը, Եղիշե Գրիգորյանը և ես՝ Բենիամին Թորոսյանս: Այդ ժողովում ես բացատրեցի մեր նպատակներն ու առաջադրանքները: Արդյունքում մենք դուրս բերեցինք հետևյալ դրույթները.

1. Գյուղում չպայքարել կոլտնտեսության դեմ, որպեսզի չխզվեն հարաբերությունները կոլտնտեսականների և համախոհների հետ, նպատակ ունենալով համախմբել այդ ուժերը խորհրդային իշխանության դեմ պայքարելու:
2. Բանվորների շրջանում ագիտացիա տանել, որ չնայած նրանց տքնաջան և նաև արտաժամյա աշխատանքին, նրանց աշխատավարձը ստանում են կողմնակի անձինք: Պետական փոխառությունների բոլոր պահումները, տարբեր նվիրատվությունները, հարկերը ազդում են իրական աշխատավարձի վրա, և արդյունքում աշխատավորը սովի է մատնվում: Այդ պատճառով աշխատավորները պետք է պահանջեն աշխատավարձի բարձրացում: Այդպիսով մենք կարող ենք սրել նաև աշխատավորների վերաբերմունքը և հարաբերությունները կոմունիստական կուսակցության քաղաքականության հանդեպ:
3. Օգնություն ցուցաբերել ինչպես գործարանաշինությանը, այնպես էլ բնակարանային շինարարությանը, քանզի մենք հուսով էինք, որ Դաշնակցություն կուսակցության վերահաստատումից հետո այդ ամենը կանցնի դաշնակների ձեռքը:
4. Պետական համակարգը հայտարարել ազգային դեմոկրատական, ուր հասարակության բոլոր խավերը ընտրական ձայնի իրավունք կունենան:
5. Հողը և գործարանները անցնում են կառավարությանը:

6. Արտադրության միջոցների վերանայում և մարդու կողմից մարդու շահագործման վերացում:
7. Պայքար հանքային ռեսուրսների պակասեցմանը՝ մինչ նոր կառավարության ասպարեզ գալը:
8. Մամուլի և խոսքի լիակատար ազատություն:
9. Եկեղեցու, դպրոցի և պետության բաժանում:

Այսքանով էլ մեր ժողովն ավարտվեց: Ղուկասն ինձ հայտնեց, որ ինքը կապվել է ոմն Պետրոսի հետ, որը հետագայում պետք է կապ պահպաներ մեզ հետ: Վասպուրականի հետ այլևս քաղաքական թեմաներով չէինք խոսում: 1932թ. մայիսի 7-ին վերադարձա Կզլկոչ, ուր աշխատեցի 1933թ. հունվարի 1-ից մինչև հունիսի 26-ը: Այդ ընթացքում ես ոչ ոքի հետ հակասովետական թեմաներով չեմ խոսել և տեղեկություն չունեմ որևիցե այլ կազմակերպության մասին:

Հարցաքննող՝ Իսրայելյան:

Մեջբերում ենք նրա մեղադրական եզրակացությունից մի հատված:

Ակտիվ մասնակցություն է ցուցաբերել դաշնակցական գաղտնի կազմակերպության աշխատանքներին, կազմակերպության ակտիվ ադամներից է: Նման գործողությունների համար դատապարտվել է բանտարկություն՝ ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 67-68 հոդվածներով: Ձերբակալվելուց առաջ 1931-1932 թթ.աշխատել է Ղուկասյանի շրջանի ՂզլԿոչ (Կարմիր խոյ) գյուղի դպրոցում որպես ուսուցիչ, 1917-1922 թթ. բնակվել է Յայջիում, 1922-29թթ. սովորել է Ախտայում, 1930-31թթ. աշխատել է Քարվանսարա գյուղում՝ որպես ուսուցիչ:

1932թ.հունիսի 27-ին ձերբակալվել է Երևան քաղաքի Կարմիր բլուր փողոցի թիվ 2 բնակարանում ապրող Վասպուրական Կարապետյանի բնակարանում: Ձերբակալության պատճառը դաշնակցական կազմակերպության անդամ լինելն էր:

Դեռ 1930թ. ընդունվել է «Դաշնակցություն» գաղտնի կազմակերպության մեջ: 1930-1931 թթ. Ախտայում կազմակերպել է ԴԵՄ (Դաշնակցական երիտասարդական միություն) գյուղական երիտասարդներից կազմակերպված միություն. այդ խմբակում մասնակցել են Գրիգոր Կարապետի Նիկողոսյանը, Եղիշե Խաչատուրի Գրիգորյանը: Այդ խմբակը հայտնաբերվել է Ախտայի ՆԳ և Անվտանգության բաժնի աշխատակիցների կողմից (գործ թերթ 84, 85, 88, 89-90): Խմբակի հայտնաբերումից հետո մեղադրյալ Թորոսյանը հեռանում է Երևան, որտեղից կապ է հաստատում ԴԵՄ խմբակի հետ: Երևանում ծանոթանում է նախկին ուսանող Գրիշա Կարապետյանի հետ:

Հարց - Ե՞րբ եք ընդունվել ԼԿԵՄ շարքերը և ինչու՞ եք հեռացվել:

Պատասխան – ԼԿԵՄ շարքերն եմ ընդունվել 1926թ., 1931թ. հեռացվել եմ 3 պատճառով.

1. Կոլտնտեսություն չմտնելու,

2. Սովետական Միության դեմ ունեցած օտարամոլ հայացքների,
3. Անկայունության համար:

Պետական համալսարան ընդունվելու համար մասնակցել եմ նախապատրաստական դասընթացների, որտեղ սովորել եմ 35 օր: Այդտեղից ինձ հեռացրին, որպես անհարազատ տարր և կոմերիտմիության կանոնադրությանը չենթարկվող, նախկինում հակասովետական հայացքներ ունենալու, Ռաֆֆու և Ա. Ահարոնյանի գրքերը կարդալու, այդ գրքերի ազդեցությունը կրելու, որպես դաշնակ ձևակերպվելու և մի շարք հորինովի պատճառներ ստեղծելու…համար:

Բենիկ Թորոսյանը մահացել 1939թ. մայիսի 26-ին:

ՀՀ ԱԱՆ արխիվ կ.գ.ֆ. 7522

Հարցաքննության արձանագրության պատճենը 30.06.1932թ.